Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 22-05-2020 թ. որոշմամբ
««ՋԻՆԻՇՅԱՆ» ՀԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՋԻՆԻՇՅԱՆ» ՀԻՇԱՏԱԿԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԱԲՈՎՅԱՆ 34 - 5
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00558
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2005-12-22
1.5 ՀՎՀՀ-ն	00060436
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10544417
	+(374)99544418
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.jinishian.org
1.8 Էլեկտրոնային փոստը	jmf@jinishian.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Արմեն Հակոբյան	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	35
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0
8. Ֆինանսավորման աղբյուրները՝	

8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by
GALSTYAN ARTUR
2809780285
Date: 2020.08.25
16:12:07 AMST

	Հիմնադրամի կանոնադրական գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրեր՝ հետևյալ ուղղություններով. Համայնքային զարգացման ծրագրեր, Տնտեսական զարգացման ծրագրեր, Քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված ծրագրեր, Առողջապահական ծրագրեր, Կրթական ծրագրեր	302636282
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Հիմնադրամի կանոնադրական գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրեր՝ հետևյալ ուղղություններով. Համայնքային զարգացման ծրագրեր, Տնտեսական զարգացման ծրագրեր, Քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված ծրագրեր, Առողջապահական ծրագրեր, Կրթական ծրագրեր	1298676
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ակտիվ երիտասարդները հանուն փոփոխության	20184066	
Ամառային ճամբար 2019	20690343	
Բժշկական օգնություն՝ Հայաստանում ընտանեկան բռնություն վերապրած կանանց և երեխաներին	1307084	
Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ	53114830	
Կրթություն հատուկ բժշկական կարիքներ ունեցող երեխաների համար	1944265	
Հայաստանում դպրոցական տարիքի երեխաների առողջության բարելավում 2019	3440263	
Հոգևոր կրթություն և դաստիարակություն երեխաների համար 2019	426605	
Ձեռք մեկնիր	10314954	
Ջինիշյան խաղահրապարակի վերանորոգում	2941413	

Սևանում հաշմանդամություն և զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար վերականգնողական կենտրոնի հիմնում	1943044
Սոցիալական պատասխանատվության դրամաշնորհներ	4977058
Սուրբծննդյան ներկայացումներ սոցիալապես անապահով և խոցելի երեխաների համար 2019	533256
Ստեփանավանում համակարգչային ծրագրավորման և ինժեներական հմտությունների դասընթացների իրականացում	5933941
Վարդենիսի զարգացման նախաձեռնություն	39988128
Վիրահայոց Թեմի Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի և Բաթումիի հոգևոր հովվության Ձեռք մեկնիր սոցիալական անապահով ընտանիքների և խոցելի խմբերի նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների և ավագների կրթամշակութային և հոգևոր ծրագրի ընդլայնում	16567527
Ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծում՝ աուտիզմ և մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների համար	11397115
Քաղաքացիական երկխոսություն և գործնական քայլեր փոփոխության համար	19260815
Առցանց բժշկական ծառայությունների զարգացում ՀՀ Գավառի տարածաշրջանի Սարուխանի ամբուլատորիայում	1067962
Գործազուրկ բնակչության ՏՏ եւ ձեռնարկատիրականհմտություններ ի բարելավում տարածաշրջանային տնտեսականզարգացման խթանման նպատակով	4123532
Հայաստանի երիտասարդ ձեռներեցներ	12561314
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	311256331
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	311256331

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 38 թերթից:

թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ

31 դեկտեմբերի 2019թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Եկամտի և ծախսերի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 17-ի վրա, որտեղ ներկայացված է նոր տիպի COVID-19 հիվանդության տարածման ազդեցությունը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

4 մայիս 2020թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	46,789	54,310
Ոչ նյութական ակտիվներ		303	546
Տրամադրված փոխառություններ	5	53,200	50,700
		100,292	105,556
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		577	3,065
Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր	6	9,129	25,977
Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվ		1,167	-
Տրամադրված փոխառություններ	5	29,439	224,056
Ժամկետային ավանդներ	7	234,466	235,189
Մնացորդներ բանկերում և դրամարկղում		381,843	139,048
		656,621	627,335
Ընդամենը ակտիվներ		756,913	732,891
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք (անսահմանափակ)		672,466	683,919
		672,466	683,919
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	19,917	25,809
		19,917	25,809
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	9	26,109	21,950
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	1,213
Եկամտին վերաբերող շնորհներ	10	38,421	-
		64,530	23,163
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		756,913	732,891

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մայիսի 4-ին

Արմեն Հակոբյան
Գործադիր տնօրեն

Լևոն Գալստյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ			
Շնորհներից եկամուտ	11	260,619	331,884
Այլ եկամուտներ		552	687
Տոկոսային եկամուտ	12	12,550	12,397
Փոխառությունների գծով պահուստի հակադարձումից եկամուտ		11,499	298
Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ	15	(3,718)	(3,509)
Ընդամենը եկամուտներ		281,502	341,757
Ծախսեր			
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(116,977)	(125,601)
Մաշվածություն և ամորտիզացիա		(8,509)	(8,881)
Տրամադրված դրամաշնորհների գծով ծախսեր	13	(77,793)	(82,034)
Օգտագործված պաշարների արժեք		(1,310)	(4,178)
Վառելիքի և տեղափոխման ծախսեր		(11,474)	(14,299)
Ստացված ծառայություններ		(18,981)	(24,737)
Վարձակալության ծախսեր		(10,007)	(17,814)
Ապահովագրության ծախսեր		(6,065)	(4,574)
Այլ ծախսեր	14	(39,219)	(44,086)
Ընդամենը ծախսեր		(290,335)	(326,204)
Արդյունք մինչև հարկերը		(8,833)	15,553
Շահութահարկի գծով ծախս	16	(2,620)	(2,502)
Տարվա արդյունք		(11,453)	13,051

Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	683,409	683,409
ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված ճշգրտում	(12,541)	(12,541)
2018թ. հունվարի 1-ի դրությամբ ճշգրտված մնացորդ	670,868	670,868
Տարվա արդյունք	13,051	13,051
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	683,919	683,919
Տարվա արդյունք	(11,453)	(11,453)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	672,466	672,466

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(11,453)	13,051
Ճշգրտումներ՝		
Շնորհներից եկամուտ	(260,619)	(331,884)
Մաշվածություն և ամորտիզացիա	8,509	8,881
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	155
Շահութահարկի գծով ծախս	2,620	2,502
Ֆինանսական եկամուտ	(12,550)	(12,397)
Անհուսալի և կասկածելի փոխառությունների գծով պահուստի շարժը, զուտ	(10,703)	(298)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	3,718	3,509
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(280,478)	(316,481)
Կանխավճարների և դեբիտորական պարտքերի փոփոխություն	16,865	8,199
Պաշարների փոփոխություն	2,488	31
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	4,280	(8,000)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(256,845)	(316,251)
Շնորհներից ստացված դրամական միջոցներ, շնորհների ետ վերադարձ, տրամադրված շնորհներ և այլ շարժեր, զուտ	293,148	331,327
Վճարված շահութահարկ	(5,000)	(3,658)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	31,303	11,418

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսային եկամուտ	13,251	13,219
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(745)	(3,410)
Փոխառություններից մուտքեր	235,585	230,800
Փոխառությունների տրամադրում	(33,200)	(227,000)
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	214,891	13,609
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	246,194	25,027
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(3,856)	(3,504)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	370,860	349,337
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում (տես՝ ծանոթ. 22)	613,198	370,860

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը (Հիմնադրամ) Հայաստանում իր գործունեությունն սկսել է 1994թ.-ին, որպես հիմնադրամ պաշտոնապես գրանցվել է 1999թ.-ին: Հիմնադրամի անմիջական ֆինանսավորման աղբյուրը ԱՄՆ Երիցական եկեղեցու (Հիմնադիր) Ջինիշյան հիշատակի ծրագիրն է, որը բարեգործական կառույց է, հիմնադրվել է 1966թ.-ի մայիսի 17-ին՝ ի հիշատակ Վարդան Ջինիշյանի ծնողների:

Հիմնադրամի առաքելությունն է օգնության, զարգացման և հոգևոր վերելքի ծրագրերի միջոցով սատարել ծանր պայմաններում գտնվող մեր հայրենակիցներին՝ դուրս գալու չքավորությունից և հաղթահարելու հուսահատությունը:

Հիմնադրամի գլխավոր նպատակն է օժանդակել Հայաստանում սոցիալական ու տնտեսական խնդիրներին ուղղված տևական լուծումներ առաջարկող միջոցառումներին:

Հիմնադրամն իրականացնում է բազմակողմանի ծրագրեր, որոնց միջոցով նպատակ ունի՝

- կրճատել աղքատությունը,
- հնարավորություն ընձեռել հասարակության բոլոր խավերին միասին աշխատել՝ հաղթահարելու սոցիալական և տնտեսական հիմնախնդիրները,
- նպաստել հայ երիտասարդների հոգևոր, մտավոր և սոցիալական զարգացմանը,
- ամրապնդել քաղաքացիական հասարակությունը՝ օժանդակելով տեղական ՀԿ-ների և այլ պաշտոնական ու ոչ պաշտոնական նախաձեռնությունների իրականացմանը,
- թեթևացնել հասարակության ծայրահեղ անապահով և մեկուսացված խմբերի հոգսերը՝ նյութական և հոգևոր աջակցության ցուցաբերմամբ:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար Հիմնադրամն իրականացնում է ծրագրեր հետևյալ մոտեցումներով՝

- Հիմնադրամի կողմից իրականացվող ինքնուրույն ծրագրեր, երբ Հիմնադրամը նախագծում և իրականացնում է իր ուրույն ծրագրերը,
- Համագործակցություն այլ կազմակերպությունների հետ, երբ Հիմնադրամը համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ դրամաշնորհների ներգրավման և այդ միջոցների օգտագործմամբ ծրագրերի իրականացման նպատակով,
- Կազմակերպություններին և համայնքներին տրվող դրամաշնորհներ, երբ Հիմնադրամը տրամադրում է դրամաշնորհեր տեղական ոչ առևտրային կազմակերպություններին և համայնքներին նրանց կողմից իրականացվող ծրագրերին աջակցության նպատակով,

- Փոխառու միջոցների տրամադրում, երբ Հիմնադրամը ֆինանսական կազմակերպություններին տրամադրում է փոխառու միջոցներ ՀՀ մարզերում գործող գյուղացիական կոոպերատիվներին և սկսնակ և գործող ձեռներեցներին վարկավորելու նպատակով:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. կազմել է 25 հոգի (2018թ.՝ 27):

Հիմնադրամի իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Աբովյան 34, բն. 5:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018 թ. գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտուրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»*

ՖՀՄՍ 16-ը *«Վարձակալություններ» փոխարինում է* ՀՀՄՍ 17-ը *«Վարձակալություն»*, առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»*):

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Հիմնադրամն ընտրել է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՍ 16-ը նախկինում ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Հիմնադրամը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* և ՀՀՄՍ 8 (Փոփոխություններ) *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* - «Էականի» սահմանում

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխությունները՝ «Էականի» սահմանումը պարզաբանելու համար և հայեցակարգային հիմունքներում ներկայացված սահմանումը բուն ստանդարտներում ներկայացվածի հետ համապատասխանեցնելու համար:

ՀՀՄՍ 1-ում էականության վերաբերյալ պահանջները փոփոխվել են՝ շեշտադրելու համար այն փաստը, որ տեղեկատվությունը չպետք է խմբավորվի կամ ապախմբավորվի այնպիսի եղանակով, որը կթաքցնի էական տեղեկատվությունը: Փոփոխություններում նաև մատնանշվում է, որ էականությունը կիրառվում է ֆինանսական հաշվետվությունների բոլոր տարրերում՝ ներառյալ առաջնային ֆինանսական հաշվետվությունները, ծանոթագրությունները և հատուկ բացահայտումները, որոնք պահանջվում են առանձին ՖՀՄՍ-ներով: Փոփոխության նպատակն է խրախուսել ընկերություններին (և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերանայման գործընթացում ներգրավված այլ անձանց) ուշադիր մոտեցում ցուցաբերել ներկայացման պահանջներին և այն տարրերին, որոնք պետք է ներառվեն ֆինանսական հաշվետվություններում:

Առաջնային հաշվետվությունների տողերի բովանդակությունը հստակեցվել է, պարզաբանելով, որ ինչպես կարիք կա ոչ էական տարրերը խմբավորել, այնպես էլ հնարավոր է, որ էական տարրեր պարունակող անհատական տողերը կարիք լինի ապախմբավորել:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ) *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* - պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020թ. հունվար ամսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 1-ի *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* փոփոխությունները, որոնք հստակեցնում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու համար կիրառվող չափանիշները: Փոփոխությունները նախատեսված են պարտավորությունների դասակարգման հանդեպ ավելի ընդհանուր մոտեցում տրամադրելու համար՝ հիմք ընդունելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմանագրային պայմանները:

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը հիմնվում է այն հանգամանքի վրա, թե արդյոք Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ իրավունք ունի՞ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո առնվազն տասներկու ամսով: Փոփոխությունները նաև պարզաբանում են, որ «մարել» եզրույթը ներառում է կանխիկի, ապրանքների, ծառայությունների կամ սեփական կապիտալի գործիքների փոխանցումը, եթե սեփական կապիտալի գործիքները փոխանցելու պարտավորությունը չի առաջանում փոխարկման հատկանիշից, որը բաղադրյալ ֆինանսական գործիքի պարտավորության բաղադրիչից առանձին է դասակարգված որպես սեփական կապիտալի գործիք:

Քանի որ այս փոփոխությունները գոյություն ունեցող պահանջները պարզաբանում, բայց չեն փոխում, չի ակնկալվում, որ դրանք նշանակալի ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների փոփոխություններ

Վերանայված հայեցակարգային հիմունքներում ներառված է չափման մասին նոր գլուխ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վերաբերյալ ուղեցույց, կատարելագործված բնորոշումներ և ուղեցույցներ, մասնավորապես՝ պարտավորության սահմանումը, ինչպես նաև կարևոր բնագավառների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպիսիք են օրինակ՝ կառավարման, զգուշավորության և չափման վերաբերյալ անորոշության դերը ֆինանսական հաշվետվություններում:

Այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 553.65 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է արդյունքում:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր	20 տարի
Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	1 - 10 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 - 8 տարի
Արտադրական և տնտեսական գույք	3 - 6 տարի
Այլ	3 - 5 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է արդյունքում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը համակարգչային ծրագրերի համար կազմում է 3-10 տարի:

3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Վարձակալված ակտիվներ

2019թ. հունվարի 1-ից սկսած կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հիմնադրամը որպես վարձակալ

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Հիմնադրամը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Հիմնադրամին,
- Հիմնադրամն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Հիմնադրամն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Հիմնադրամն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հիմնադրամը որպես վարձակալ

Գործառնական վարձակալություն

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս [Խումբը/Հիմնադրամը] դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.8 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերվող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա կոնկրետ ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հիմնադրամի կողմից հավաքագրված դրամային միջոցները չեն դիտարկվում որպես Հիմնադրամի եկամուտ այն դեպքերում, երբ տվյալ ծրագրի կամ շնորհի իրականացումը չի կատարվում կամ վերահսկվում Հիմնադրամի կողմից: Նշված գումարները չեն ներառվում Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Շնորհը, որը Հիմնադրամին հատկացվել է ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով և որի գծով առկա չեն Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող կոնկրետ պայմաններ (տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ճանաչվում է այն ժամանակաշրջանի արդյունքում, երբ Հիմնադրամը ստանում է շնորհը:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական արդյունքի, ոչ էլ՝ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարներ, [չի վերաբերում կենսաթոշակային վճարների մասով աշխատակցի հաշվին պարտադիր պահումներին]:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.11 Եկամտի ճանաչում

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ստացված նվիրատվություններից, մատուցված ծառայություններից, Հիմնադրամի կողմից տրամադրված փոխառությունների տոկոսներից, բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսներից և այլն:

Նվիրատվություններից եկամուտ
Այս եկամուտը ճանաչվում է, երբ առկա է հիմնավորված երաշխիք, որ նվիրատվությունը ստացվելու է կամ երբ նվիրատվությունը փաստացի ստացվել է: Այս եկամուտը ներառվում է «Շնորհներից եկամուտ» հոդվածում:

Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ

Այս եկամուտը ներառվում է «Շնորհներից եկամուտ» հոդվածում: Ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.8-ում:

Ծառայությունների մատուցում
Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է յուրաքանչյուր ամսվա կտրվածքով գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթ ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

Այս եկամուտը ներառվում է «այլ եկամուտ» հոդվածում:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

3.12 Ծախսերի ճանաչում

Հիմնադրամը ճանաչում է ծախսերը դրանց կատարման պահին: Տրամադրված դրամաշնորհները ճանաչվում են ծախս այն ժամանակահատվածում, երբ շնորհառուն ներկայացնում է ծախսված դրամաշնորհի հաշվետվությունը և Հիմնադրամն ընդունում է այդ ծախսերը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր	Մեքենա-արքավո-ումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	121,965	30,127	46,287	13,778	212,157
Ավելացում	-	2,754		200	2,954
Օտարում	-	(10,255)	(556)	(1,385)	(12,196)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	121,965	22,626	45,731	12,593	202,915
Ավելացում	-	745	-	-	745
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	121,965	23,371	45,731	12,593	203,660
Կուտակված մաշվածություն					
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	67,624	28,432	45,861	10,053	151,970
Տարվա հաշվարկ	6,098	1,709	111	758	8,676
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(10,206)	(241)	(1,594)	(12,041)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	73,722	19,935	45,731	9,217	148,605
Տարվա հաշվարկ	6,098	1,494	-	674	8,266
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	79,820	21,429	45,731	9,891	156,871
Հաշվեկշռային արժեք					
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	48,243	2,691	-	3,376	54,310
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,145	1,942	-	2,702	46,789

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում զրո հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 72,626 հազար դրամ (2018թ.՝ 71,931 հազար դրամ):

5 Տրամադրված փոխառություններ

Ստացողի անվանում	Փոխառության մայր գումար (հազար դրամ)	Արժույթ	Փոխառության ձևակերպման ամսաթիվ	Փոխառության վերադարձման ամսաթիվ	Տարեկան տոկոսադրույք (%)	Փոխառության մ 2019թ. Մայր գումար	 Ստացվելիք տոկոսներ
Չապահովված փոխառություններ							
Խաչատուր Մադոյան	7,400	ՀՀ դրամ	29.09.2010թ.	31.12.2012թ.	0%	2,115	-
Ճշմարիտյան Գոռ	200	ՀՀ դրամ	27.07.2019թ.	31.12.2020թ.	0%	200	
"Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա" ԻԱՄ	62,668	ՀՀ դրամ	29.10.2010թ.	31.12.2012թ.	3%	41,126	-
«ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին տրված փոխառություններ՝ ըստ ծրագրերի							
«Փոխառական օժանդակություն Կալավան համայնքի սկսնակ ձեռներեցների համար»	12,000	ՀՀ դրամ	03.04.2018թ.	07.05.2021թ.	3%	12,000	36
«Ֆինանսական օժանդակություն սկսնակ և գործող բիզնեսներին գյուղական վայրերում»	15,000	ՀՀ դրամ	05.12.2018թ.	08.12.2023թ.	3%	11,300	11
«Համագործակցություն ֆերմերային տնտեսություններին ֆինանսական ծառայություններ տրամադրելու նպատակով»	200,000	ՀՀ դրամ	30.11.2018թ.	25.11.2019թ.	3%	-	-
«Համագործակցություն ֆերմերային տնտեսություններին ֆինանսական ծառայություններ տրամադրելու նպատակով»	200,000	ՀՀ դրամ	25.11.2017թ.	30.11.2018թ.	3%	-	-

Տրամադրված փոխառություններ (շարունակություն)

Ստացողի անվանում	Փոխառության մայր գումար (հազար դրամ)	Արժույթ	Փոխառության ձևակերպման ամսաթիվ	Փոխառության վերադարձման ամսաթիվ	Տարեկան տոկոսադրույք (%)	Փոխառության մ 2019թ. Մայր գումար	 Ստացվելիք տոկոսներ
«Ֆինանսական օժանդակություն սկսնակ և գործող բիզնեսներին գյուղական վայրերում»	21,900	ՀՀ դրամ	25.05.2016թ.	31.05.2021թ.	1.5%	7,700	67
«Ֆինանսական օժանդակություն սկսնակ և գործող բիզնեսներին գյուղական վայրերում»	28,500	ՀՀ դրամ	05.08.2016թ.	31.10.2021թ.	1.5%	10,500	28
«Տեղական արժեշղթայի զարգացում»	39,500	ՀՀ դրամ	14.04.2017թ.	04.05.2020թ.	3%	9,500	184
«Հայաստանի երիտասարդ ձեռներեցներ»	6,000	ՀՀ դրամ	23.5.2019թ.	10.6.2022թ.	1.5%	6,000	52
«Հայաստանի երիտասարդ ձեռներեցներ»	27,000	ՀՀ դրամ	14.10.2019թ.	15.10.2024թ.	1.5%	27,000	86
						127,441	464
Կասկածելի փոխառությունների գծով պահուստ							
"Գյուղատնտեսական Ասոցացիաների Ֆեդերացիա" ԻԱՄ						(41,126)	-
Խաչատուր Մադոյան						(2,115)	-
"ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ" ՈՒՎԿ ՓԲԸ						(2,025)	-
						(45,266)	-
Հաշվեկշռային արժեք						82,175	464

Հիմնադրամը "ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ" ՈՒՎԿ ՓԲԸ-ին (ՀՀ մարզերում գործող գյուղացիական կոոպերատիվներին) տրամադրել է փոխառություններ՝ սկսնակ և գործող ձեռներեցներին վարկավորելու նպատակով: Տրամադրված փոխառությունների վերադարձելիության ռիսկը կրում է վարկային կազմակերպությունը:

Կասկածելի փոխառությունների գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2019թ.	2018թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ (ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվարկված)	55,969	43,726
Կուտակված արդյունքի սկզբնական մնացորդում վերաներկայացված գումարներ	-	12,541
Կորուստների գծով պահուստը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	55,969	56,267
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	796	-
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	(11,499)	(298)
Կորուստների գծով պահուստը 2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,266	55,969

Հիմնադրամի գնահատումները՝ կապված տրամադրված փոխառությունների միջին շուկայական տոկոսադրույքի հետ ներկայացված է ծանոթագրություն 18.1-ում:

6 Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ	9,129	14,721
Դեբիտորական պարտքեր՝ ստացվելիք շնորհներից	-	10,783
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	473
	9,129	25,977

Տրված կանխավճարների մնացորդը ներառում է ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքներին և գյուղապետարաններին տարբեր բարեգործական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված դրամաշնորհների մնացորդը՝ 7,976 հազար դրամ (2018թ.՝ 13,775 հազար դրամ) և այլ կանխավճարները՝ 1,153 հազար դրամ (2018թ.՝ 946 հազար դրամ), որոնք տրամադրվել են ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Տրամադրված դրամաշնորհների մնացորդը ներառում է՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմ	1,631	5,864
«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ	1,687	-
«Ինստիգեյթ ուսումնական կենտրոն» հիմնադրամ	1,171	-
«Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ	212	585
Այլ	3,275	7,326
	7,976	13,775

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

7 Ժամկետային ավանդներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ներդրված ավանդ	231,355	231,812
Ավանդի գծով հաշվեգրված տոկոսներ	3,111	3,377
	234,466	235,189

Ժամկետային ավանդները ներդրվել են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ում, «Էյչ-Էս-Բի-ՍԻ» Բանկ Հայաստան ՓԲԸ-ում և "Ամերիաբանկ" ՓԲԸ-ում 98 օր-ից մինչև 369 օր մարման ժամկետներով և միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 2.58 տոկոս (2018թ.՝ 2,53 տոկոս):

Ժամկետային ավանդներից տոկոսային եկամուտը 2019թ. ընթացքում կազմել է 5,131 հազար դրամ (2018թ.՝ 5,640 հազար դրամ) (տե՛ս ծանոթ. 12):

8 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	25,809	29,595
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս՝ ծանոթ. 11)	(6,637)	(7,196)
Տեղափոխում եկամտին վերաբերող շնորհներից	745	3,410
Տարեվերջի մնացորդ	19,917	25,809

9 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	20,190	20,852
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	5,091	258
Այլ	828	840
	26,109	21,950

10 Եկամտին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	-	8,959
Ավելացում	293,148	319,139
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհ	(745)	(3,410)
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ (տես՝ ծանոթ. 11)	(253,982)	(324,688)
Տարեվերջի մնացորդ	38,421	-

Հիմնադրամը տարվա ընթացքում հիմնադրից և այլ դոնորներից ստանում է նվիրատվություններ և օգտագործում է այդ միջոցներն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար՝ հետևյալ ուղղություններով.

- Համայնքային զարգացման ծրագրեր,
- Տնտեսական զարգացման ծրագրեր,
- Քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված ծրագրեր,
- Առողջապահական ծրագրեր,
- Կրթական ծրագրեր
- Ունիվերսալ վարկային կազմակերպություններին փոխառություններ տրամադրելու միջոցով հիմնադրամի թիրախային խմբերին մատչելի վարկերի տրամադրում, և այլն:

Տարվա ընթացքում շնորհները ստացվել են հետևյալ աղբյուրներից՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ԱՄՆ-ի Երիցական եկեղեցի	236,041	243,233
«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ԲԿ	10,583	27,394
Գյուլբեկյան Հիմնադրամ	2,991	18,324
Եվրոպական միություն	-	13,337
«ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ	3,500	3,500
«Էյչ-Էս-Բի-ՍԻ» Հոլդինգ ՓԼՍ	38,087	-
Այլ	1,946	13,351
	293,148	319,139

11 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհներից (տե՛ս ծանոթ. 8)	6,637	7,196
Հետաձգված եկամտից (տե՛ս ծանոթ. 10)	253,982	324,688
	260,619	331,884

12 Տոկոսային եկամուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառություններից ստացված տոկոսային եկամուտ (տե՛ս ծանոթ. 5)	7,419	6,757
Ավանդներից ստացված տոկոսային եկամուտ (տե՝ս ծանոթ. 7)	5,131	5,640
	12,550	12,397

13 Տրամադրված դրամաշնորհների գծով ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	4,850	4,850
Կարին ԿՄՀԿ	-	8,180
Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն	-	7,200
Հայ Առաքելական Ուղղ. Ս. Եկեղեցու Վիրահայոց թեմ	20,664	2,117
Գեղարքունիքի մարզ, գյուղ Տորֆավան	5,783	-
Տիրամայր Հայաստանի կուսաստան	4,850	4,850
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն	4,850	4,850
Գեղարքունիքի մարզ, Գեղամասարի համայնքապետարանի աշխատակազմ	2,576	-
Վանեվան գյուղի միջնակարգ դպրոց	2,059	
Ինսթիգեյթ ուսումնական կենտրոն	3,923	-
Կախակն գյուղի միջնակարգ դպրոց	1,804	-
«Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ	7,768	15,098
Լոռու Զարգացման կենտրոն ՀԿ	-	6,607
Կոմպաս ԳԿԽԿ ՀԿ	-	6,591
Երևանի Ռոտարի ակումբ Ինթերնեյշնլ	-	3,215
Գեղաքար գյուղի գյուղապետարան	1,338	2,147
Կանանց աջակցման կենտրոն	919	2,188
Նորակերտ գյուղի գյուղապետարան	1,390	2,501
Այլ	15,019	11,640
	77,793	82,034

Հիմնադրամը տրամադրում է դրամաշնորհներ ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքներին և գյուղապետարաններին նրանց կողմից իրականացվող ծրագրերին աջակցության նպատակով:

14 Այլ ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ստացված ծառայություններ բժշկական հաստատություններից	-	3,939
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	12,628	12,702
Գրասենյակային ծախսեր	4,942	9,297
Այլ	21,649	18,148
	39,219	44,086

15 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		
Ժամկետային ավանդներ	(1,943)	(396)
Դեբիտորական պարտքեր	17	(13)
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	(1,913)	(3,108)
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	121	8
	(3,718)	(3,509)

16 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,620	2,502

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(8,833)		15,553	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2018թ.՝ 20%)	(1,767)	20.00	3,111	20.00
Չհարկվող եկամուտներ/ չնվազեցվող ծախսեր, զուտ	4,387	(49.66)	(609)	(3.92)
Շահութահարկի գծով ծախս	2,620	(29.66)	2,502	16.08

17 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսի բռնկման ազդեցությունը այս պահին անհայտ է: COVID-19-ի հետ կապված զարգացող իրավիճակը կարող է որոշակի ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության շարունակականության կամ գործառնությունների ծավալի վրա: 2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել է երկրում արտակարգ իրավիճակ, որը կտևի մինչև 2020թ. մայիսի 14-ը: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ազդեցությունը:

18 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

18.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Տրամադրված փոխառությունների միջին շուկայական տոկոսադրույք

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 5-ում, Հիմնադրամը փոխառություններ է տրամադրում վարկային կազմակերպություններին: Ղեկավարության գնահատմամբ՝ տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքները համապատասխանում են դրանց իրական արժեքներին, և հետևաբար դրանք չեն զեղչվել շուկայական տոկոսադրույքներով՝ հաշվի առնելով նման գումարներով ու պայմաններով փոխառություններ ստանալու և տրամադրելու համար համապատասխան ֆինանսական շուկայի բացակայությունը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև այն փաստը, որ Հիմնադրամը համարվում է ոչ առևտրային կազմակերպություն և չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ: Ի լրումն, Հիմնադրամի կողմից տրամադրված փոխառությունները հիմնականում կարճաժամկետ են և պետք է մարվեն 12 ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, եթե փոխվեն ղեկավարության գնահատումները վերը նշված հարցի շուրջ, ապա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները կենթարկվեն էական փոփոխությունների:

19 Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	82,639	274,756
Ժամկետային ավանդներ	234,466	235,189
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	381,843	139,048
	698,948	648,993

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Այլ կրեդիտորական պարտքեր	21,018	21,692
	21,018	21,692

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը և պարտքային ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամն իր ազատ միջոցների մի մասը պահում է ԱՄՆ դոլարով և Եվրոյով, և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Ժամկետային ավանդներ	234,466	-
Մնացորդներ բանկերում	99,974	32,107
	334,440	32,107

Հոդված

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ		
Ժամկետային ավանդներ	235,189	-
Մնացորդներ բանկերում	41,134	49,041
	276,323	49,041

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժևորումը կամ արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
Օգուտ կամ վնաս	33,444	27,632	3,211	4,904

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկը առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և տրամադրված փոխառությունները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Հիմնադրամը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Հիմնադրամի քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ:

Տրամադրված փոխառություններ

Այս ռիսկի ազդեցությունն առաջանում է կազմակերպություններին տրամադրված փոխառություններից, որոնք ապահովված չեն:

2019 և 2018թթ. ընթացքում տրամադրված փոխառությունները գյուղացիական կոոպերատիվներին՝ սկսնակ և գործող ձեռներեցներին վարկավորելու նպատակով «ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին տրված ֆինանսական միջոցներն են: Ղեկավարության համոզմամբ տրամադրված փոխառությունները ամբողջովին ենթակա են փոխհատուցման: Տրամադրված փոխառությունների վերադարձելիության ռիսկը կրում է վարկային կազմակերպությունը:

Փոխառությունների մասով 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ստեղծել է պահուստ՝ 45,266 հազար դրամի չափով (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 55,969 հազար դրամ):

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամը ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2019թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 6 ամիս	828	828
1-5 տարի	20,190	20,190
	21,018	21,018

2018թ.	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 6 ամիս	840	840
1-5 տարի	20,852	20,852
	21,692	21,692

21 Պայմանականություններ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները՝ նվազեցված բանկային օվերդրաֆտի մնացորդով: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	208թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	381,843	139,048
Կարճաժամկետ ներդրումներ (տե՛ս ծանոթ. 7)	231,355	231,812
	613,198	370,860

23 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են իր հիմնադրին և հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

23.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

2019թ. ընթացքում Հիմնադրամը ստացել է իր հիմնադրից 236,041 հազար դրամ (2018թ.՝ 243,233 հազար դրամ):

23.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	24,236	24,635

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.08.2020 11:29